



ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ¹⁾



արդու կենսական պահանջներն ընդհանրապէս:

Կանոնաւոր կազմուածքը և առողջ գործարանները միակ անհրաժեշտ պայմանները չեն մարդուս կեանքի պահպանութեան համար։ Գործարանների բանելու համար, առանց որոնց ապրել չէ կարելի, անհրաժեշտ է որոշ պահանջների բաւարարութիւնն, որին հասնում ենք միայն շրջապատող աշխարհի օգնութեամբ։ Այսպէս, օրինակ, շունչ քաշելու համար մարդս պէտք ունի օղի, մարմինը լուանալու և խմելու համար — ջրի, նիւթերի փոխանակութեան (օբմքնեած վեպեստեած) պահպանութեան համար — սննդի առարկաների, մարմինը մինուլորտի ազդեցութիւնից պահպանելու համար — հագուստի և ընակարանի։ Հաւասարապէս անհրաժեշտ պահանջ է մարդու համար լոյսը, նոյնպէս և մտաւոր աշխատանքը

¹⁾ Gesundheitsbüchlein. Berlin. 1895.

և այս վերջինս այնքան աւելի մեծ չափով. ինչքան որ բարձր է լինում մարդու զարգացման աստիճանը, որին հասել է նա կրթութեան և դաստիարակութեան շնորհիւ:

Վերը լիշուած կենսական պահանջներին բաւականութիւն տալու ամենանպատակայարմար եղանակի ուսուցումը առողջապահութեան գլխաւոր նպատակներից մէկն է:

1. Օ Դ

Սթնոյորտ եւ նորա բաղադրութիւնը.

Օդը, որ անհրաժեշտ է թէ մարդկանց և թէ կենդանիների շնչելու համար, պատում է երկրագունդը մօտ 75—90 կիլոմետր լայնութեամբ, որ կոչում է մթնոլորտ։ Նա շատ գագերի մի խառնուրդ է. 100 լիտր օդը պարունակում է մօտ 78 լիտր բորակածին, և 1 լիտր թթուածին, $\frac{1}{30}$ լիտր ածխաթթու և փոփոխուող քանակութեամբ ջրային շոգի։

Օդի բորակածին, թթուածին եւ ածխաթթու։

Բորակածինը, որ օդի գլխաւոր խառնուրդն է, ինքնիրան ընդունակ չէ կեանք պահպանել, եթէ մարդ բացառապէս բորակածնով լքուած տարածութեան մէջ գրտնուի՝ կըխեղտուի։ Բորակածինը շնչելու օդի հետ մարմնի մէջ մտնելով, ոչինչ ազդեցութիւն չունի կազմուածքի մէջ կատարուող գործողութեանց վերալ։

Առանց թթուածնի ոչ թէ միայն չէ կարող ապլիւ որևէ կենդանի էակ, ալլ նա անհրաժեշտ է թէ ալրման համար և թէ ամեն նիւթերի քայքալման, որոնք առաջ են եկած բուսական և կենդանական թագաւորութիւնից։ Թթուածնի՝ լայտնի պայմաններում գործած ազդեցութիւնը մարմնի վերալ, որ թթուացում է կոչշում, իսկ քիմիական գործողութիւն է. թթուածնը լուծելով գործարանաւոր նիւթերը և միանալով նոցամէջ գտնուած ածխաթթու և ջուր։ Զնայելով թթուածնի տնընդհատ, նշանաւոր պահանջին, նորա համեմատական

պարունակութիւնը օդի մէջ գրեթէ անփոփոխ է մնում, որովհետև թթուածնի հարկաւոր քանակութիւնը տալիս են բոլորը։ Կենդանական և բուսական կեանքի մէջ մշտական փոխանակութիւն է կատարւում, այսինքն մարդկանց և կենդանիների արտաշնչած ածխաթթուն, առևէ լուսի ազդեցութեամբ բոլորի մէջ լուծում է նախնական բաղկացնող մասերի, մատակարարելով բոլորին իրանց հիւսուածքները կառուցանելու անհրաժեշտ ածխածինը, իսկ կենդանիներին և մարդկանց շընչելու կարեղոր թթուածինը։ Բացի այս՝ բոլորը վերադարձնում են օդին թթուածնի հարկաւոր քանակութիւնը, տարրալուծելով իրանց արմատներով և տերեներով ընդունած ջուրը։ Իսկ ջրածինը, որ ստացւում է ջրի տարրալուծումից, միանում է ածխածնի հետ, որ մնացած է ածխաթթուի տարրալուծուելուց։

Փոթորկի ժամանակ եղած ելեկտրականութեան կամ անձրևի ու ցողի ջրի գոլորշիանալու ազդեցութեամբ, օդի մէջ գտնուած թթուածնի մէկ մասը խտանում է իւր սկըզբ։ Նական ծաւալի երկու երրորդ մեծութեամբ։ Այսպիսով առաջանում է թթուածնի մի առանձին կերպարանափոխութիւն – օգօնը, որը մի առանձին, իրեն յատուկ հոտունի և եթէ օդի մէջ մեծ քանակութեամբ գտնուի՝ մենք կարող ենք զգալ հոտառութեան գործարանի օգնութեամբ։ Շատերը երբ օգօն պարունակող օդ են շընչում, ասում են թէ «թարմ օդ են շնչում»։ Օգօնը թթուածնից աւելի մեծ չափով թթուացման ընդունակութիւն ունի։ Հին ժամանակները մեծ նշանակութիւն էին տալիս օգօնի ազդեցութեան կազմուածքի և առողջութեան վրայ, իսկ այժմ կարծում են, թէ նա օգտակար է մարդուս համար լոկ միայն, որովհետև նա մաքրում է օդը՝ սորա մէջ գտնուած գործարանաւոր նիւթերի թթուացման սգնութեամբ։

Ածխաթթուն ստացւում է օդի մէջ ամեն տեսակ ալրումներից և մարդկանց ու կենդանիների շնչառութեամբ։ չափահաս մարդու մէկ ժամում արտաշնչած օդը պարունակում է 22—23 լիտր ածխաթթու։ Ածխաթթուն առաջանում է երկրի մակերեսովի վերաէ

փթման բազմազան գործողութիւններով և արտադրւում
է հանքերից, երկրի ճեղքերից և հրաբուղիներից:

Մարդկանց և կենդանիների համար ածխաթթուն
թոյն է: Ճշմարիտ է, սովորական օդը պարունակում է
իւր մէջաննշան քանակութեամբ ալդ գազից և թթուածնի
ու բորակածնի հետ խառն ներշնչուած ածխաթթու գազը
անվնաս է առողջութեան համար, բայց ածխաթթուի
քանակութիւնն աւելանալու հետ օդի մէջ՝ նա աւելա-
ցնում է նորա վնասակար յատկութիւնները, օրինակ ած-
խաթթուով առատ աղբիւրների մօտերում, թթուացում
կատարուող նկուղներում, գարեջրի գործարաններում և
այլն: Այն օդի շնչելը, որ պարունակում է 1—5% ած-
խաթթու, պատճառում է անախորժ զգացողութիւններ,
գլխի պտոյտ, գլխացաւ և սրտախառնութիւն, իսկ 30%
այդ գազը պարունակող օդի մէջ մարդկի կարճ ժամա-
նակում մեռնում են:

Ջրի եւ տացութեան չափը օդի մէջ:

Մեր կեանքի համար պակաս նշանակութիւն չունի
սաեւ օդի խորութեան աստիճանը, այն է ջրի քանա-
կութիւնը օդի մէջ, որ գոլորշիանալիս աննկատելի կեր-
պով խառնում է մթնոլորտի հետ: Զոր օդը խլում է
մարմնից ջուրն ու տաքութիւնը, և ալդպիսով մորթը
չորանում է և ճղքճղքում, շնչառութեան գործարան-
ների մաղասամաշկերը ցամաքում են, ձայնը կերկեր-
ուում է և ծարաւ է զգացւում: Խոնաւ օդի մէջ մարմնի
մակերևոյթից արտադրուող ջուրը հնար չունի գոլոր-
շիանալու, մորթը այլ ևս ջերմութիւն չէ տալիս և մեզ
պահում է անախորժ ճնշման զգացմունք, որ խոնաւ
օդի բարեխառնութեան բարձրանալու հետ աւելի և ա-
ւելի ճնշող և խեղդիչ է գառնում մեզ համար:

Ջրի պարունակութիւնը մթնոլորդի մէջ նշանաւոր
փոփոխութեան է ենթարկուած:

Ջրի քանակութիւնը օդի մէջ չափուում է այսպէս
կոչուած հիլումէտրի կամ խոնաւաշափի միջոցով: Նո-
ցանից ամենապարզ տեսակները հիմնուած են մարդու
մազի՝ խոնաւ օդի մէջ երկարելու, իսկ չորի մէջ կար-
ճանալու յատկութեան վերայ, կամ փայտեղէնի չոր օ-

գում կուչ գալու և խոնաւ օդում նորից ուղղուելու յատկութեան վերալ:

Զրի ամենաշատ շոգիանալու տեղերում, ինչպէս օք. ծովի ափին, լճերի, գետերի մօտ և ալլն, նոյնպէս և մարգագետիններում և անտառներում, օդը աւելի խոնաւ է քան աւազուտ հողի վերալ և չոր անապատներում: Ամեն տեղ սակալն մի սահման կալ, որից բարձր օդը անզօր է ջուր ընդունել իւր մէջ: Այս սահմանն անուանում են յագեցման աստիճան և նշանակում են թուանշաններով, որոնք ցոյց են տալիս թէ մէկ խորանարդ մետր օդը քանի՞ գրամմ ջուր կարող է պարունակել ջրալին շոգիի ձևով: Յագեցման աստիճանի մեծութիւնը կախուած է ջերմութիւնից, որ հաղորդում է օդին մասամբ ուղղակի արևից, մասամբ երկրի մակերևոյթից և նորա վերալ գտնուած կենդանի էակներով: Այսպէս օրինակ, յագեցման աստիճանը (ըստ Փլիւգգի) հաւասարում է.

0դի - 20°	8.	տաքութեան	մէջ =	1,06.
» - 10	»	»	» =	2,30.
» 0	»	»	» =	4,87.
» + 10	»	»	» =	9,37.
» + 20	»	»	» =	17,06.
» + 30	»	»	» =	30,14.

Այս յարաբերութիւնից երևում է որ տաք օդը սովորաբար խոնաւ է սառն օդից:

Օդի տաքութիւնը չափուում է ջերմաչափով: Ջերմաչափը բաղկացած է մի բարակ ապակէ խողովակից, որի մէջ լցրած է սնդիկ կամ սպիրտ. խողովակի ներքեակի ծայրը լայնացած է գնդակի ձևով, իսկ վերինը փակուած է. խողովակի միջի հեղուկի բարձրանալը կամ իջնելը ցոյց է տալիս բարեխառնութեան փոփոխութիւնը, որովհետև սպիրտն ու սնդիկը ջերմութեան ազդեցութեան տակ լայնանալու և ցրտի ազդեցութեամբ սրդմուելու (ցածրանալու) յատկութիւն ունին: Ջերմութեան զանազան աստիճանները չափելու համար ջերմաչափը բաժանուած է հաւասար մասերի, որոնց երկու ծայրերը ցոյց են տալիս սառուցման եւ եռացման կէտերը. նո-

ցանից առաջինը ցոլց է տալիս այնտեղը, որից վեր սպիրտը կամ սնդիկը չեն բարձրանում, երբ ջերմաչափը գնում ենք հալուղ ձեան մէջ. երկրորդ կէտը ցոլց է տալիս այնտեղը, ուր լայնացող սնդ՝ կը կամ սպիրտը հասնում են, երբ ջերմաչափը գտնվում է եռացող ջրի գոլորշու մէջ. Ջերմաչափի այն մասը, որ այս երկու վերջնածալրերի մէջտեղն է գտնվում, Բէօմիւրը բաժանել է 80 հաւասար մասերի (աստիճաններ), Ցէլզը 100, իսկ Ֆարէնհայտը 180 մասերի. Բէօմիւրի հաշուով 8° տաքութիւնը հաւասար է 8. 10°. ին և Ֆ. 18°. ին. Սառուցման և եռացման կէտերի մէջ եղած տարածութիւնը համահաւասար աստիճանների բաժանելով կարելի է ստանալ բարձր և ցածր բարեխառնութիւն ցոլց տուող նշաններ: Բէմիւրի և Ցէլզի ջերմաչափերի վերալ սառուցման կէտը նշանակուած է զրո-ով (0), նորա վերալի աստիճանները կոչւում են ջերմութեան աստիճաններ (+), իսկ ներքենները ստանութեան աստիճաններ (-): Ֆարէնհայտի նշերմաչափի վերալսառուցման կէտը համապատասխանում է 32° ին, այնպէս որ եռացման կէտը 212° ի վերալ է ($32 + 180$): Որոշեալ բարեխառնութիւնը ցոլց տալու համար աստիճան բառի փոխարէն գործ են դնում 0 նշանը և թուին աւելացնում են այն ջերմաչափի առաջին տառը, որը գործ են ածում: Օրինակ Ցելզի ջերմաչափով 11 աստիճան արտայալտում է այս նշանով $+11^0$ 8., Բէօմիւրով 14 աստիճան ցուրտը այսպէս -14^0 Բ.:

Հետևեալ աղիւսակով հնարաւոր է համեմատել Բէօմիւրի, Ցելզի և Ֆարէնհայտի ջերմաչափերի զանազան ցուցումները:

$-14,2^0$ Բ.	Համապատասխանում	$\xi - 17,8$ Ց. =	0^0 Ֆ.
-8	\triangleright	\triangleright	-10 $\triangleright = +$ 14 \triangleright
0	\triangleright	\triangleright	0 $\triangleright = +$ 32 \triangleright
$+8$	\triangleright	\triangleright	$+10$ $\triangleright = +$ 50 \triangleright
$+16$	\triangleright	\triangleright	$+20$ $\triangleright = +$ 68 \triangleright
$+24$	\triangleright	\triangleright	$+30$ $\triangleright = +$ 86 \triangleright
$+32$	\triangleright	\triangleright	$+40$ $\triangleright = +$ 104 \triangleright
$+40$	\triangleright	\triangleright	$+50$ $\triangleright = +$ 122 \triangleright

+ 48	»	»	+ 60	»	= + 140	»
+ 56	»	»	+ 70	»	= + 158	»
+ 64	»	»	+ 80	»	= + 176	»
+ 72	»	»	+ 90	»	= + 194	»
+ 80	»	»	+ 100	»	= + 212	»

Օդի շարժողութիւնը:

Տաքութիւնից օդը լայնանում է, բռնում է աւելի մեծ տարածութիւն և այսպիսով նօսրանում է, որպէս աւելանում է օդի ջուր ընդունելու լատկութիւնը: Այս է պատճառը, որ տաք օդը սառից թեթև է, ալոհնքն նօսրացած տաք օդի մի խորանարդ մետրը՝ սառը խիտ օդի խորանարդ մետրից պակաս է կըունմ: Տաք օդը իւր թեթևութեան շնորհիւ ձգտում է դէպի վեր բարձրանալու, իսկ ծանր սառն օդը իջնում է ցած, Բայց որովհետև առաւելապէս տաքանում են մթնոլորտի այն շերտերը որոնք մօտ են երկրի՝ արևից տաքացած մակերևոյթին, և որովհետև այս շերտերը երկրագնդի զանազան մասերում զանազան բարեխառնութիւնն ունին, ուստի տեղի է ունենում օդի սառն ու տաք շերտերի մշտական հաւասարութիւնն. այս երևոյթները կազմում են եղանակների փոփոխութեան գլխաւոր պատճառը: Օդի ուժեղ հոսանքներից առաջ է դալիս հողմ, իսկ տաք օդի սառչելու ժամանակ՝ նորա մէջ գտնուած զոգիացած ջուրը բաժանւում է ջրալին մանր գնդիկների ձևով, որ մեր աչքին երևում է որպէս մառախուղ և ամպ. աւելի խիստ սառչելու դէպքում տռաջ են բերում մթնոլորտային մրուցներ, որոնք լայտնի են անծրեւ, ծին և կարկուտ անուններով: Որովհետև օդը ամենից աւելի հասարակածի մօտ է տաքանում, իսկ սառչում է բևեռների մօտ, ուստի մեր լիշած օդերեւութական երկոյթները գոյանում են գլխաւորապէս օդի երկու ընդդիմակաց հոսանքների ազդեցութիւնից, որոնցից մէկը հասարակածից տաք հոսանքը տոտնում է բևեռների մօտ (հասարակածային հոսանք), իսկ միւսը բևեռալին սառն օդը շարժում է դէպի հասարակած (ըեւեռուպիլին հոսանք): Երկու հոսանքներն ել,

Երկրի պատելու պատճառով, զանազան շեղումների են ենթարկվում իրանց գլխաւոր ուղղութիւնից:

Օդի շարժողութիւնը զգալի է լինում մեզ միայն այն գէպքում, երբ օդը անցնում է մի վալրկեանում $\frac{1}{2}$ մետրից ոչ պակաս արագութեամբ. օդի շարժման միջին արագութիւնը (հողմի միջին ոյժը) համարում են երեք մետր մի վալրկեանում. Եթէ օդի արագ շարժողութիւնը այնպիսի արագ փոփոխութիւն է առաջացնում մեր մարմինը պատող օդի ծալերի մէջ, որ մեր մարմնի մակեր "ոլթից արձակում է աւելի չափով տաքութիւն և խոնաւութիւն, ալդ գէպքում մենք ցուրտ ենք զգում:

Մթնոլորտի մնշողութիւնը:

Մթնոլորտի ջերմութեան և շարժողութեան հետ կապ ունի մթնոլորտային մնշողութիւնը, որ ըստ ինքեան ներկալացնում է մեր վերալ գտնուած օդի սեան ծանրութիւնը: Սովորաբար մենք մեր մարմնի մակերևոյթի վերալ ճնշում չենք զգում, այլ բարձրանալով բարձր լեռան գլուխը կարող ենք համոզուել, որ ալդ ծանրութիւնը պակասում է՝ համապատասխան մեր անցած օդի շերտերի ծանրութեան: Որովհետև մնշողութեան պակասելով օդը վերին շերտերում աւելի նօսրանում է, ուստի և բաւականաչափ թթուածին ստանալու համար շնչառութեան թիւը աւելանում է, սակայն չնայելով սորան, թթուածնի քանակութիւնը ներշնչած օդի մէջ այնքան պակասում է, որ մենք զգում ենք լոգնութիւն, թուլութիւն և քնածութիւն: Մանր, արենատար անօթների պատերը, մթնոլորտալին ճնշման պակասելով, որ ներկալանում է ինչպէս հակակըն արենալին ալիքի ճնշման, կարող են ճղճղուել, քթից և բերանից արիւն կարող է գալ, իսկ լոգերի մէջ սովորական պնդութիւն չէ զգացնում, որովհետև ուկրների վերջաւորութիւնները, մթնոլորտի ճնշման պակասելու պատճառով զրկում են իրանց նախկին վոխադարձ կապակցութիւնից: Այս տեսակ անախորժ զգացնողութիւններ ունին լաճախ դաշտավայրերի բնակիչները, ելք նոքա բարձրանում են բարձր սարերը և

ալդ յալտնի է «լեռնալին հիւանդութիւն» անունով:

Մթնոլորտի ճնշողութիւնը ենթարկուած է յաճախակի փոփոխութեան. բարեխառնութեան բարձրանալու և օդի խոնաւութեան աւելանալու ժամանակ նապակասում է այս երկոյթների առաջ բերած օդի կշռի պակասելու համեմատ. ցըտի և օդի չորութեան ժամանակ նա աւելանում է:

Օդի ճնշումը չափում է օդաշափով (բարօմետր): Ամենագործածականը սնդիկի օդաշափն է. նա կազմուած է մի ապակէ խողովակից, որ կորացրած է լատիներէն Ստառի ձևով: Այս խողովակի մի թևի մէջ, որից օդը հանուած և վերը փակուած է, սնդիկի մի սիւնակ կալ, որ հաւասարակշռութեան մէջ է շնորհիւ մթնոլորտի ծանրութեան, որ ներգործում է խողովակի միւս՝ վերսկից բաց թևից, այնպէս որ սնդիկի գագաթը, օդի ճնշման նայելով, երբեմն բարձրանում է և երբեմն իջնում: Ծովի ափին մթնոլորտի ճնշումը հաւասարակշռում է սնդիկի սիւնակի 760 միլիմետր բարձրութեան, երկրի մակերևոյթից աւելի բարձր տեղերում, ուր մթնոլորտալին ճնշումը նուազում է, բարօմետրը ցած է ընկնում:

Մի ուրիշ տեսակը, որ կոչում է քարօնետր-աներօիդ, շինուած է այն յալտնի սկզբունքով, որ մետաղեալ, կարելոյն չափ օդը հանած, ամանը մթնոլորտալին ճնշման աւելանալովը սղմւում է. իսկ ճնշման պակասելու հետ նորից լայնանում: Ամանի պատերի այս շարժողութիւնները ցոյց է տալիս առանձին յարմարացրած սլաքը և առանձին բաժանումների օդնութեամբ կարող են չափուիլ:

Մթնոլորտալին ճնշողութեան փոփոխութիւնները մեծ կապ ունին եղանակի փոփոխութիւնների հետ: Տ. թեղանակին ճնշողութիւնը թուլանում է, մանաւանդ փոթորիկից առաջ. հողմերը աւելացնում կամ պակասեցնում են ճնշողութիւնը, նայելով թէ Բնչ օդ են բերում նոքա, չոր և սառն, թէ խոնաւ ու տաք:

Օդի անմաքրութիւնները:

Օդը սովորաբար պարունակում է իւր մէջ շատ լուսն և.

կամ քիչ քանակութեամբ կեղտոտող նիւթեր, Սոցա վերաբերում են մարդկանց արտաշնչումները, որոնք նկատելի են մանաւանդ ննջարաններում կամ նեղուածք բնակարաններում, այնուհետև մի քանի գործարանների, օրինակ խէժ եփելու, կաշուեղէնի, վառելու գաղ պատրաստող կամ քիմիական գործարանների արտադրած գազերը, որոնք լաճախ ծանր, խեղդող օդ են տարածում։ Մանր մարմնիկների նշանաւոր քանակութիւն հասարակ աչքով անգամ կարելի է նկատել օդի մէջ ինչպէս թող, երբ արևի ճառագալթը մի ճեղքից ընկնում է մութ սենեկի մէջ։

Օդի մէջ գտնուող պինդ բաղադրիչ մասերին է վերաբերում այն թողը, որ բա, ձրանում է մարդկանց ամենօրեալ կեանքի միջոցին և կամ արդիւնաբերող հիմնարկութիւններից, օրինակ գիպսի և կրէ ջրաղացներից, նոյնպէս և ծիննելոլիզներից և գործարանների խողովակներից վեր թռչող մուրը։ Օդի այս տեսակ խառնուրդները, նոցա հիւանդառիթ լատկութեան շնորհիւ կամ թէ մեծ քանակութեամբ պարունակուելովը, կարող են գնասակար ազդեցութիւն գործել ոչ թէ մի այն մեր շնչառութեան գործարանների վերալ, այլ և ամբողջ կազմուածքի, բերեյով իրանց հետ վարակիչ սերմեր. որոնք կարող են մտնել մեր գործարանները թողի հետ միասին։ Մարմնի մէջ վնասակար նիւթեր մտնելուց պաշտպանում է շնչառութեան գործարանների խոնաւ մակերևոյթը, իսկ առանձնապէս քթի խոռոչի ծուռումուռ անցքերը, որոնց մէջ մնում են շատ թողի մասնիկներ. այս պատճառով էլ թողոտ տեղերում բերանը պէտք է փակել և քթով շնչել։ Ի հարկէ սորանով բոլոր վտանգը չէ հեռանում, որովհետև այնտեղ, ուր որ օդը ապականուած է, կարելի է, շնայելով սորան, լաճախ նկատել շնչառութեան գործարանների զանազան հիւանդութիւններ։

Քաղաքներում օդը սովորաբար չափազանց ապականուած է լինում մեծ շարժողութեան և բազմաթիւ գործարանների պատճառով. ուր քիչ թող կալ, օրինակ անտառներում և ծովեղներին, օդը առաւել մաքուր

է և օգտակար մեր առողջութեան համար:

Կլիմա:

Երկրի մակերևոյթի ամեն մի տեղը գտնուում է իւր տուանձին օդերևութական պայմանների ազգեցութեան տակ, որոնք առանց ազգեցութեան չեն մնում և մարդու առողջութեան վերալ: Օդերևութական պայմանների գումարումը կօչում է կլիմայ՝ օդի միջին ջերմութիւնը, մթնոլորտալին ճնշումը, օդի խոնաւութիւնը, հողմերի շարժողութիւնը և ջրալին մրուճները (անձրև, ձիւն և ալլն): Երկնքի ամպամածութիւնը արգելում է արևի ճառագալթները և ալսպիսով երկրի մակերևոյթից աւելի պակաս ջերմութիւն է հաղորդում մթնոլորտի վերին շերտերին:

Ընդհանրապէս կլիման որոշում է երկրի աշխարհագրական գրութեամբ, որովհետև օդի միջին ջերմութիւնը իջնում է քանի հասարակածից գնում ենք դէպի բևեռները: Կլիման բաժանում է.—այրեցնալ, բարեխառն և սառն, մթնոլորտալին ճնշման զանագանութիւնը լայտնի առանձնութիւններ է տալիս բարձր տեղների կամ լեռների կլիմային և հովիտների կլիմային. ծովային կամ եղերային կլիման որոշում է ցամաքայինից օդի բարեխառնութեան պակաս փոփոխութիւններով, օդի նշանաւոր խոնաւութեամբ և լաճախակի անձրևներով ու մառախուղներով ծովեցրեալ վալըներում: Բացի դորանից մէկ տեղի կլիման զգալի կերպով կարող է տարբերութիւն մինչև անգամ նորա հարևան տեղի կլիմայից, եթէ տուած երկրը շըջապատուած է մեծամեծ անտառներով և լեռնաշղթաներով, որոնք պաշտպանում են նորան հողմերի գէմ:

Քերմ. Թարգ. ոժշկ. Ս. ՄԱՅՈՒԹԵԱՆՑ

